600.0012.30.01.19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 հունվարի 2019 թվականի №12Ա

ք. Երևան

«ԷՅ-Ի-ՋԻ-ՍԵՐՎԻՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ (ՀԶՈՐՈՒԹՅԱՆ) ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԷ №0561 ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2014 թվականի հոկտեմբերի 22-ի «ԷՅ-Ի-ՋԻ-ՍԵՐՎԻՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Սպիտակ Ջուր» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու և նախազգուշացնելու մասին» №392Ա որոշմամբ «ԷՅ-Ի-ՋԻ-ՍԵՐՎԻՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրվել է «Սպիտակ Ջուր» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0561 լիցենզիան (այսուհետ՝ ԼԷ №0561 լիցենզիա),

բ) Հանձնաժողովի 2017 թվականի մայիսի 17-ի №161Ն որոշման 2-րդ կետի 10-րդ ենթակետի համաձայն՝ մինչև 2019 թվականի հունվարի 1-ը էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ունեցող անձինք ապահովում են վերահսկիչ հաշվիչների համապատասխանությունը նույն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական համակարգի ցանցային կանոնների 6-րդ բաժնի 25-րդ գլխի պահանջներին, սակայն «Հաշվարկային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության 2018 թվականի դեկտեմբերի 10-ի №01/199-18 գրության համաձայն՝ «Սպիտակ Ջուր» փոքր հիդրոէլեկտրակայանում վերահսկիչ հաշվիչները չեն համապատասխանեցվել ցանցային կանոնների 6-րդ բաժնի 25-րդ գլխի պահանջներին,

գ) Հանձնաժողովը 2018 թվականի դեկտեմբերի 19-ի №ԱԲ-3532Զ գրությամբ Ընկերությանը տեղեկացրել է, որ անհրաժեշտ է ձեռնարկել միջոցներ սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական համակարգի

ցանցային կանոնների վերոհիշյալ պահանջի կատարումն ապահովելու ուղղությամբ և այդ մասին տեղեկացնել Հանձնաժողովին,

դ) Ընկերությունը 2019 թվականի հունվարի 11-ի №AEG 01-04/011 գրությամբ հայտնելով, որ ելնելով մի շարք տեխնիկական պատճառներից՝ տնական ժամանակ է, ինչ «Սպիտակ Ջուր» փոքր հիդրոէլեկտրակայանը չի շահագործվում, խնդրել է կասեցնել ԼԷ №0561 լիցենզիայի գործողությունը և հետաձգել Հանձնաժողովի 2018 թվականի դեկտեմբերի 19-ի №ԱԲ-3532Զ գրությամբ ներկայացված պահանջի կատարումը,

ե) Հանձնաժողովը 2019 թվականի հունվարի 22-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ Հանձնաժողովի 2017 թվականի մայիսի 17-ի №161Ն որոշման 2-րդ կետի 10-րդ ենթակետի պահանջի խախտման փաստի ուսումնասիրության նպատակով,

զ) հարուցված վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը, հայտնելով, որ կայանը սնող ջրատարի տեխնիկական անբավարար վիճակի պատճառով, 2015 թվականի մայիս ամսից «Սպիտակ Ջուր» փոքր հիդրոէլեկտրակայանը էլեկտրական էներգիա չի արտադրում, խնդրել է կասեցնել ԼԷ №0561 լիցենզիայի գործողությունը և հետաձգել Հանձնաժողովը 2018 թվականի դեկտեմբերի 19-ի №ԱԲ-3532Զ գրությամբ ներկայացված պահանջի կատարումը,

է) Հանձնաժողովի 2017 թվականի մայիսի 17-ի №161Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական համակարգի ցանցային կանոնների 255-րդ կետի համաձայն՝ հաշվառման տվյալների հավաքագրումն իրականացնում է շուկայի օպերատորի ծառայությունների մատուցման լիցենզիա ունեցող անձը՝ էլեկտրաէներգիայի (հզորության) հաշվառման ավտոմատացված համակարգի միջոցով: Շուկայի օպերատորը պատասխանատվություն է կրում հաշվառման տվյալների սահմանված ժամկետից ուշ կամ սխալ հավաքագրման համար,

ը) Հանձնաժողովի 2017 թվականի օգոստոսի 9-ի ի №344Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի ժամանակավոր առևտրային կանոնների 151-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության էլեկտրական էներգիայի (հզորության) մեծածախ շուկայում էլեկտրական էներգիայի առևտրային հաշվառումը շուկայի օպերատորը կատարում է լիցենզավորված անձանց, որակավորված սպառողների սահմանազատման կետերի համար՝ այդ կետերում կամ դրանց էլեկտրական ցանցով մոտակա կետերում տեղադրված հաշվառքի կետերից ստացված հաշվառման տվյալների հիման վրա: Ընդ որում, առևտրային հաշվառքի սարքերի խափանման դեպքում շուկայի օպերատորը

էլեկտրական էներգիայի առևտրային հաշվառումը կատարում է պայմանագրում ամրագրված վերստուգիչ հաշվառքի սարքերից ստացված տվյալների հիման վրա,

թ) Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2002 թվականի նոյեմբերի 20-ի №80Ա որոշմամբ «Հաշվարկային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրված էլեկտրաէներգետիկական շուկայի օպերատորի ծառայության մատուցման №0097 լիցենզիայի պայմանների 5-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն վերջինիս լիցենզավորված գործունեության բացառիկ գործառույթներից է Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական համակարգի ցանցային կանոնների համաձայն էլեկտրաէներգիայի (հզորության) առևտրային և վերահսկիչ (տեխնիկական) հաշվառման համալիրների տեղակայման, փոխարինման, դրանց աշխատունակության ստուգման և հաշվիչների ստուգաչափման գործառույթների կոորդինացումը, ինչպես նաև այդ հաշվառման համալիրների միջոցով էլեկտրաէներգիայի (հզորության) առևտրային և վերահսկիչ հաշվառումը,

ժ) հարուցված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Հանձնաժողովի 2017 թվականի մայիսի 17-ի №161Ն որոշման 2-րդ կետի 10-րդ ենթակետի պահանջը, կայանում չի տեղակայել Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական համակարգի ցանցային կանոնների պահանջներին համապատասխանող վերահսկիչ հաշվիչներ՝ խոչընդոտելով էլեկտրաէներգետիկական շուկայի օպերատորի՝ «Հաշվարկային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության՝ սույն որոշման նախաբանի «ը», «թ» և «ժ» պարբերություններում նշված պարտավորությունների կատարումը,

ժա) Հանձնաժողով ներկայացված հաշվետվությունների համաձայն՝ «Սպիտակ Ջուր» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիա չի արտադրվել 2016 թվականի հունվարից, Հանձնաժողովը նպատակահարմար է համարում կիրառել «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածով սահմանված «կասեցում» տուժանքի տեսակը՝ մինչև խախտման պատճառի վերացումը, որի պարագայում Ընկերության 2019 թվականի հունվարի 11-ի №AEG 01-04/011 գրությունը դառնում է առարկայազուրկ, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին և 11-րդ մասերը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Հանձնաժողովի 2017 թվականի մայիսի 17-ի №161Ն որոշման 2-րդ կետի 10-րդ ենթակետի պահանջի խախտման հիմքով կասեցնել ԼԷ №0561 լիցենզիայի գործողությունը՝ մինչև խախտման պատճառի վերացումը:
2. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանը օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Մ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ք. Երևան
30 հունվարի 2019թ.